



ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ԱՌՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ Ա. ԿԻՐԱԿԻ

18 ՅՈՒՆԻՈՒՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Երիտասարդութեան տարի	էջ 2
Մկրտութիւնը (2)	էջ 6
Ծանուցում	էջ 8

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (54.1-14)

Ուրախացի՛ր, Երուսաղէ՛մ, դուն՝ ամուլդ, որ չէիր ծնաներ. ցնծութեամբ երգէ եւ աղաղակէ, դուն որ չէիր երկներ, որովհետեւ դուն, ամլութեան պատճառով լքուածդ աւելի շատ զաւակ պիտի ունենաս քան ամուսին ունեցողը,- կ'ըսէ Տէրը: Ընդարձակէ՛ վրանիդ տարածութիւնը, ընդլայնէ՛ պատերը, տեղ մի՛ խնայեր. չուանները երկարէ, ցիցերը ամրացուր, որովհետեւ ամէն ուղղութեամբ պիտի տարածուիս շուտով, քու սերունդդ ազգերու պիտի տիրէ եւ անոնց լքած քաղաքները պիտի շինէ ու լեցնէ: Մի՛ վախնար, այլեւս ամօթով պիտի չմնաս. մի՛ ամէնար պիտի չնախատուիս. ամլութեանդ յաւիտենական ամօթը պիտի չմոռնաս, այրիութեանդ նախատինքը բնաւ պիտի չյիշես, որովհետեւ Ստեղծիչդ քեզի ամուսին պիտի ըլլայ. Ան՝ որուն անունն է՝ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՔԵՐՈՒ ՏԷՐ, Իսրայէլի սուրբ Աստուածը՝ որ պիտի փրկէ քեզ եւ ամբողջ աշխարհին ալ Աստուածը պիտի կոչուի: Լքուած եւ վշտահար կին մը չէի՞ր, կամ մերժուած նորահարս մը չէի՞ր, երբ Տէրը քեզ կանչեց: Արդ, Աստուած կ'ըսէ. «Թէպէտ կարճ ժամանակ մը քեզ լքեցի, բայց ողորմութեամբ եւ սիրով քեզ պիտի ընդունիմ: Բարկութեան պահուն կարճ ատեն մը երես դարձուցի քեզմէ, բայց յաւիտենական սիրովս պիտի գթամ քեզի,- կ'ըսէ Տէրը, փրկիչդ: «Ինչպէս ժամանակին ջրհեղեղէն ետք Նոյին երգում ըրի՝ այլեւս բնաւ երկիրը չպատժել ջրհեղեղով, նոյնպէս ալ հիմա կ'երգնում որ բարկութեամբս պիտի չպատժեմ քեզ: Լեռները կրնան կորսուիլ եւ բլուրները չքանալ, բայց ողորմութիւնս անպակաս պիտի ըլլայ քու վրայդ»,

«Ընդարձակէ՛ վրանիդ տարածութիւնը, ընդլայնէ՛ պատերը, տեղ մի՛ խնայեր...»

խաղաղութեան ուխտս անսասան պիտի մնայ,- կ'ըսէ ողորմած Տէրը: Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմխիթար տառապեալ, հաշտութիւն պիտի ընեմ հետդ, որպէսզի մխիթարուիս. ահա ես քու հիմերդ շափուղայ քարերով պիտի դնեմ, պատերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ կարմիր յակինթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բերեղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով: Բոլոր որդիներդ Աստուծմէ ուսած պիտի ըլլան, զաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս»:

«Բոլոր որդիներդ Աստուծմէ ուսած պիտի ըլլան, զաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՏՈՍԻ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (1.1-11)

Ես՝ Պօղոս, որ Քրիստոս Յիսուսի առաքեալն եմ մեր փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի հրամանով, քեզի կը գրեմ, հաւատքի հարազատ որդիս, Տիմոթէոս: Թող Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիստոս Յիսուս շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Երբ Մակեդոնիա կ'երթայի, խնդրեցի որ Եփեսոս մնաս եւ խօսիս քանի մը հոգիներու, որպէսզի դադրին սխալ վարդապետութիւններ ուսուցանելէ եւ չզբաղին սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով եւ ազգահամարներով, որոնք վէճերու դուռ կը բանան, փոխանակ օգնելու մարդոց հաւատքին ամրապնդման եւ Աստուծոյ փրկութեան ծրագրին իրականացման: Գերագոյն պատուիրանը սէրն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ

Գերագոյն պատուիրանը սէրն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէ քոյսած սէրը:

անկեղծ հաւատքէն բղխած սէրը: Շատեր այս պատուէրը մոռցած, դատարկ վիճաբանութեանց մէջ մտնելով մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ո՛չ իրենց խօսածը գիտեն, ոչ ալ Աստուծոյ Օրէնքը որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն:

Գիտենք թէ Օրէնքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեւով գործադրուի: Սակայն գիտենք նաեւ թէ օրէնքը արդարներուն համար դրուած չէ, այլ՝ անօրէններուն եւ անհնազանդներուն, ամբարիշտներուն եւ մեղաւորներուն, սրբութիւնները ոտնակոխ ընողներուն ու պիղծերուն, հայր եւ մայր անարգողներուն, մարդասպաններուն, պոռնկութիւն ընողներուն, արուագէտներուն, մարդ առեւանգողներուն, ստախօսներուն, սուտ երգում ընողներուն, եւ բոլոր այն արարքներուն համար, որոնք հակառակ են իմ տուած պարկեշտութեան պատուէրներուս. պատուէրներու, որոնք համաձայն են երանելի Աստուծոյ փառքը պատմող Աւետարանին, որ ես հաւատարմօրէն քարոզեցի եփեսացիներուն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (2.1-11)

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին:

Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. «Գինի չունին»: «Մայր, ինձի այս մասին ըսելու պէտք չունիս», պատասխանեց Յիսուս, «Իմ ժամանակս տակաւին չէ հասած»: Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ ըսէ ձեզի, կատարեցէ՛ք»:

Հրեաներու մաքրուելու սովորութեան համաձայն հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիդր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»: Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէ՛ք եւ մատակարարին տարէ՛ք»: Անոնք ալ տարին:

Մատակարարը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ էր. թէ եւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին: Այն ատեն մատակարարը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գինովնան, այն ատեն՝ հասարակը, մինչ դուն ընտիր գինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին իրեն:



ՄԵԾԻ ՏՏԱՆ ԿԻՐԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԹԵԱՄԿԱՂ ԱՌԱՋՆՈՐԿԵՐՈՒՄ,
ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՄ,
ԱԶԳԱՐԱ ԻԸՆԿԱՆՈՒԹԵԱՆՁ, ԵՒ
ՄԵՐ ԺՊՈՒԿՈՒՐԴԻ ՉԱԽԱԿԵՐՈՒՄ,

Նոր բացուող տարուան սեմին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն կ'ողջունենք ձեզ՝ Հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով:

Ինչպէս գիտէք, վերջին վեց տարիներուն Մեր որդեգրած աւանդութեան համաձայն, իւրաքանչիւր տարին կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները լուսարձակի տակ բերելու մեր հաւաքական կեանքին առնչուած նուիրական արժէք մը, լուրջ մարտահրաւէր մը կամ հիմնական մտահոգութիւն մը՝ մեր ազգային-եկեղեցական կեանքը աւելի՛ կազմակերպելու, մեր հոգեւոր ինքնութիւնը աւելի՛ ծաղկեցնելու ու հայեցի դիմագիծը աւելի՛ պայծառացնելու հեռանկարով:

Այս նախանձախնդրութենէն մղուած, 2003 տարին հռչակած էինք "Աստուածաշունչի Տարի", 2004ը՝ "Ընտանիքի Տարի", 2005ը՝ "Ազգային Պահանջատիրութեան Տարի", 2006ը՝ "Հայ Դպրոցի Տարի", 2007ը՝ "Հայ Լեզուի Տարի", 2008ը՝ "Քրիստոնէական Դաստիարակութեան Տարի": Նոյն սպասումով, 2009 տարին կը հռչակենք՝

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ»

Արդարեւ, երիտասարդութիւնը մնայուն ու առաջնահերթ տեղ է գրաւած Մեր Հայրապետական պատգամներուն, մտածումներուն ու գործունէութեան մէջ: Ոչ միայն կարեւորութեամբ շեշտած ենք երիտասարդութեան կենսական դերը հայ կեանքէն ներս, այլ նաեւ ու մանաւանդ յատուկ ճիգ ենք թափած առաւելագոյն չափով մեր երիտասարդները ներառելու եկեղեցւոյ առաքելութեան ծիրէն ներս: Վերջերս Քրիստոնէական լեզուով Մեր հրատարակած գիրքը՝ "Վերանորոգուած Աշխարհի մը համար" ձօնեցինք հայ երիտասարդութեան, յիշեցնելով որ ան կոչուած է վճռական դերակատարութեան մեր եկեղեցւոյ ու ազգի վերանորոգման մէջ: Խօսելով դարձեալ երիտասարդութեան իւրայատուկ կարեւորութեան մասին, շուրջ երկու շաբաթներ առաջ Անթիլիասի

Մայրավանքին մէջ Մեր նախագահութեամբ տեղի ունեցած Ազգային Ընդհանուր Ժողովը, իր կարգին, շեշտեց թէ՛ "երիտասարդութիւնը մեր կարեւոր առաջնահերթութիւններէն մէկն է":

Արդ, 2009 տարին Երիտասարդութեան Տարի հռչակելը պարագայական կամ ձեւական երեւոյթ մը չէ: Երիտասարդութիւնը մեր եկեղեցւոյ ու ազգին համար առաջնահերթ մտահոգութիւն է, ու պէտք է դառնայ, իր լուրջ տաքնապնդումով ու արդար սպասումներով, իր հարուստ կարողականութեամբ ու իւրայատուկ դերակատարութեամբ:

* * *

21-րդ դարը ոմանք կը բնորոշեն որպէս կրօնի դար. ուրիշներ՝ որպէս արհեստագիտութեան դար. տակաւին կարելի է այլ բնութագրումներով ներկայացնել արմատական փոփոխութիւններու ու հսկայաքայլ յառաջդիմութիւններու մէջ գտնուող ներկայ աշխարհը: Բոլոր մօտեցումները ճիշդ ըլլալով հանդերձ, ներկայ ժամանակաշրջանը մարդկային պատմութեան Մենք կը նկատենք որպէս երիտասարդութեան վերազարթօնքի շրջան: Արդարեւ, երբ նայինք մեր շրջապատին, վստահաբար պիտի նշմարենք թէ երիտասարդութիւնը տիրական ներկայութիւն է ամենուրէք: Ան գործօն ներկայութիւն է կրօնական աշխարհէն ներս, մշակութային բնագաւառէն ներս, քաղաքական մարզէն ներս, տնտեսական կալուածէն ներս եւ ընկերութեան կեանքի այլազան երեսներուն վրայ: Երիտասարդութիւնը սկսած է մանաւանդ տեսանելի ներկայութիւն դառնալ ղեկավարութեան բարձրագոյն մակարդակներու վրայ: Այս իրողութենէն մեկնելով, կրօններ, մշակոյթներ, քաղաքական թէ տնտեսական կառոյցներ առաջնահերթ կարեւորութիւն սկսած են ընծայել երիտասարդութեան՝ յատուկ հիմնադրամներ հաստատելով ու ծրագիրներ մշակելով, ինչպէս նաեւ երիտասարդութիւնը ստեղծագործ աշխատանքի մղող այլազան նախաձեռնութիւններու դիմելով:

Պատահական երեւոյթներ չեն ասոնք: Երիտասարդութիւնը արիւնը կը կազմէ ընկերութեան կեանքին, ողնասիւնը՝ համայնքի մը ու բաբախող սիրտը՝ կառոյցի մը: Այլ խօսքով, ան կենսունակութիւն հայթայթող ու շարունակականութիւն ապահովող այն ուժն է մարդկային կեանքին, առանց որուն պիտի թառամի ընկերութեան մը կեանքը, պիտի դանդաղի անոր աշխատանքի թափը, պիտի տկարանայ անոր կամքը ու մթազնի անոր ապագայ տանող ճամբան:

Մեր եկեղեցւոյ ու ազգի կեանքէն ներս գործող կառոյցները, վերջին տասնամեակներուն, առաւել կամ նուազ չափով ու գանազան կերպերով, սկսած են երիտասարդութեան կարեւորութիւնը շեշտել: Արդարեւ, հպանցիկ ակնարկ մը մեր շրջապատին, ցոյց պիտի տայ հետզհետէ աճող նախանձախնդրութիւն մը հայ երիտասարդութեան նկատմամբ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւս, նո՛յն մօտեցումով ու նո՛յն մտահոգութենէն մեկնած, սկսած է վերաբծեւորել մեր կեանքէն ներս երիտասարդութեան ներկայութեան ու դերակատարութեան հրամայական անհրաժեշտութիւնը: Այսպէս, շուրջ վեց տարիներ առաջ, Կաթողիկոսարանէն ներս հաստատեցինք երիտասարդութեան յատուկ բաժանմունք: Թեւազրեցինք մեր թեմերուն՝ Ազգ. Առաջնորդարաններու ծառայութեան ծիրէն ներս երիտասարդութեան յատուկ ծրագիրներ մշակել: Երեք առիթներով երիտասարդաց համասփիւղեքեան համագումարներ կազմակերպեցինք. եւ վերջին

երկու Ազգային Ընդհանուր Ժողովներուն օրակարգի առանձին նիւթ դարձուցինք երիտասարդութիւնը: Զանազան առիթներով, անգլիերէն լեզուով ու երկխօսութեան ձեւով, եւ նկատի ունենալով յատկապէս արեւմտեան երկիրներուն մէջ ապրող մեր երիտասարդները, ներկայ երիտասարդութիւնը յուզող խնդիրներուն անդրադարձանք: Այս աշխատանքներուն առընթեր, Մեր ուշադրութեան յատուկ առարկան դարձաւ միշտ երիտասարդութիւնը միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց, քրիստոնէական ու հայեցի դաստիարակութեան եւ Կաթողիկոսարանի առաքելութեան այլ բնագաւառներէն ներս:

Հակառակ այս գործնական քայլերուն, բաւարար չենք նկատեր երիտասարդութեան ուղղութեամբ ցարդ կատարուած աշխատանքը: Տակաւին չա՛տ ընելիք կայ: Նո՛յն մտահոգութիւնը յայտնեցինք վերջին Ազգ. Ընդհանուր Ժողովին, ըսելով՝ «Երիտասարդութիւնը մեր եկեղեցւոյ, մեր ազգին ու հայրենիքի եւ մեր բոլոր կառոյցներուն համար հարկ է որ դառնայ մնայուն ու հիմնական մտասեւեռում: Եթէ կ'նուգեմք հայրենիքը գորացնել, պէտք է դառնանք երիտասարդութեան. եթէ կ'նուգեմք եկեղեցին պայծառացնել, պէտք է դառնանք երիտասարդութեան. եթէ կ'նուգեմք մշակոյթը ծաղկեցնել, դարձեալ պէտք է դառնանք երիտասարդութեան»:

Արդ, մեկնելով այս անհերքելի իրողութենէն, Հայրապետական այս Գիրով պիտի ուզէինք նախ մեր ժողովուրդի զաւակներուն հետ բաժնել մի քանի մտածումներ եւ ապա հրաւիրել մեր երիտասարդները լրջօրէն խորհրդածելու կարգ մը երեւոյթներու ու մտահոգութիւններու մասին:

* * *

Կ'ուզենք սկսիլ յաճախ լսուող հետեւեալ հարցադրումներով՝ ո՛ւր է երիտասարդութիւնը այսօր, ի՞նչ մտահոգութիւններ կը դիմադրաւէ ու ի՞նչ մարտահրաւէրներու դիմաց կը գտնուի:

Նստելով երիտասարդութեան մասին, ընդհանրապէս կ'ըսուի թէ ան տագնապի մէջ է: Մեր հայեցողութեամբ երիտասարդութիւնը տագնապի մէջ չէ, այլ՝ տագնապահար ներկայ աշխարհին մէջ փնտռուքի մէջ է: Երիտասարդութեան փնտռուքը ունի երեք տարբեր սակայն իրարու հետ սերտօրէն ագուցուած տարածքներ.՝

Ա.- ԻնՎէստի-ԹեԱն ՓՆՏՈՏՈՒՔ: Ներկայ ժամանակներու երիտասարդը, բոլոր ընկերութիւններու կեանքէն ներս, ինքնութեան փնտռուքի մէջ է: Յարատեւ շարժումի մէջ գտնուող աշխարհը, ուր արմատական փոփոխութիւններ կը յեղաշրջնարժէքներ ու աւանդութիւններ, կառոյցներ ու համակարգեր, երիտասարդութիւնը կը մատնէ բեւեռացումի՝ երբեմն բողոքի, երբեմն ինքնակզիպացումի ու երբեմն ընկերային այլազան յոռի երեւոյթներու ճամբով արտա-կայտուող: Ինքզինք ըլլալու իւրայատուկ դիմագիծ ու ինքզինք արտայայտելու ինքնուրոյն կերպ փնտռող երիտասարդութիւնը փաստօրէն շուարումի մատնուած է: Երիտասարդութեան այս հոգեվիճակը յաճախ զինք կ'առաջնորդէ տարօրինակ մտածելակերպերու, գործելակերպերու ու կենցաղակերպերու:

Բ.- ՀՈԳԵՒՈՐ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՓՆՏՈՏՈՒՔ: Աշխարհի կրօնները չկրցան քայլ պահել յարափոփոխ աշխարհի յառաջացուցած նոր պայմաններուն հետ:

Անոնք մնացին ներամփոփ ու անհաղորդ արտաքին աշխարհի իրականություններուն: Այս կացութիւնը հոգեւոր կեանքի նկատմամբ յատուկ հակում ու զգայնութիւն ունեցող երիտասարդները յաճախ կը մղէ հոգեւոր արժէքներ փնտռելու իրենց պատկանած կրօններու կառոյցներէն դուրս: Երբ կրօններ չեն կրնար գոհացնել իրենց երիտասարդներուն հոգեւոր ծարաւը՝ օգտակար դառնալով անոնց հոգեւոր աճման ու կազմաւորման, եւ միւս կողմէն՝ երբ կրօնը որպէս ազդու միջոց կը շահագործուի այլ նպատակներու, կրօնական ճշմարտութիւններու փնտռողներին մէջ գտնուող երիտասարդները ենթակայ կը դառնան արտաքին վնասաբեր ազդեցութիւններու:

Գ.- ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՈՒ ՓՆՏՈՒՄԻՔ:
Բազմակրօն, բազմազոյն ու բազմամշակոյթ ընկերութիւնները, ուր աշխարհայեացքներու ու աւանդութիւններու, արժէքներու ու արժեքահիերարխիալ կենտրոնացում մը տեղի կ'ունենայ, երբեմն նոյնիսկ բիրտ միջոցներով ու արտայայտութիւններով, սկսած են ծնունդ տալ բարոյական արժէքներու ու ըմբռնումներու նոր համակարգի: Ոմանք այս կացութեան մէջ կը տեսնեն աւանդական բարոյական արժէքներու նահանջ. ուրիշներ՝ ներկայ աշխարհի իրականութեանց համահունչ նոր արժէքներու յառաջացում: Հետեւաբար ոմանց համար բարոյապէս անընդունելի նկատուող երեւոյթներ, ուրիշներուն համար դարձած են բնական: Այս շփոթ կացութեան դիմաց բարոյական արժէքներու նկատմամբ յատուկ արեւելում ունենալու փնտռողներին մէջ է երիտասարդութիւնը:

Ինականաբար նոյն այս շփոթահար պայմաններու ազդեցութեան տակ կը գտնուի այսօր նաեւ հայ երիտասարդութիւնը, որ անբաժան ու անբաժանելի մասը կը կազմէ ներկայ ընկերութեան: Հարկ է ըլլալ իրապաշտ: Ձեռք կրնար կղզիացած ապրիլ ներկայ աշխարհին մէջ: Մնայուն ու գոյութեանական փոխ-յարաբերութեան մէջ կը գտնուինք մեր շրջապատին հետ: Ներկայ ընկերութեան մէջ "մեր"ի եւ "ձեր"ի յստակ բաժանումները փաստօրէն սկսած են անհետանալ: Հետեւաբար, ներկայ երիտասարդութեան փնտռողները նաեւ հա՛յ երիտասարդութեան փնտռողներն է. անոր խնդիրները նաեւ հա՛յ երիտասարդութեան խնդիրներն են:

* * *

Այս բոլորին առընթեր, եւ թերեւս անոնցմէ առաջ, հայ երիտասարդութիւնը, Մեր հայեցողութեամբ, կը գտնուի երեք լուրջ մարտահրաւէրներու դիմաց. -

Առաջին, հայ երիտասարդը կարիք ունի հոգեմտաւոր առողջ կազմաւորման: Հայակերտումը հէնքը կը կազմէ երիտասարդին ինքնութեան գիտակից զարգացման: Առանց բրիտանացական ու հայեցի դաստիարակութեան ու հոգեմտաւոր կազմաւորման, հայ երիտասարդին ինքնաճանաչումը պիտի ըլլայ անորոշ, եւ ան աշխարհի բոլոր անկիւններէն փչող հովերուն դիմաց պիտի կորսնցնէ իր կեանքին յստակ ուղղութիւնը: Հայ երիտասարդին հայեցի կազմաւորումը տեղի կ'ունենայ հայ դպրոցէն ներս: Իսկ հայ դպրոցի բացակայութեան կրկնակի դեր ունին ընտանիքն ու եկեղեցին: Հետեւաբար, հայոց պատմութեան ճանաչումը եւ մեր կրօնական, ազգային, բարոյական ու մշակութային աւանդութիւններուն

ու արժէքներուն փոխանցումը նոր սերունդին պէտք է նկատուի առաջնահերթ պարտաւորութիւն՝ ընտանիքին, դպրոցին ու եկեղեցւոյ համար: Արդարեւ, հոգեւոր ու հայեցի առողջ դաստիարակութիւն ունեցող հայ երիտասարդը վստահաբար հեռու պիտի մնայ ներկայ ընկերութիւնը շրջապատող բարոյական ու ընկերային ախտերէ:

Երկրորդ, հայ երիտասարդը իր կեանքին մէջ ազգային ու միջազգային պէտք է վերածէ ներդաշնակ ու հաւասարակշռուած ներկայութեան: Համաշխարհայնացած ներկայ աշխարհին մէջ, ուր այլեւս գոյութիւն չունին սահմաններ, միջոցներ, տարածութիւններ ու տարբերութիւններ, ուր ընկերութիւններ կ'ընթանան դէպի հաւաքական մէկ ամբողջութիւն՝ հաւաքական մէկ մշակոյթով ու ընկերա-տնտեսական դրութեամբ արտայայտուող, դժբախտաբար ազգայինը սկսած է տեղի տալ համամարդկայինին դիմաց: Ձեռք կրնար թու՛մը կանգնել համաշխարհայնացումի ահաւոր հոսանքին դէմ: Անհրաժեշտ է իրապաշտ ու քննական երկխօսութիւն ունենալ անոր հետ: Արդ, ներկայ աշխարհի իրականութեան մաս կազմող հայ երիտասարդը կոչուած է թէ՛ ազգայինին կառչել եւ թէ՛ միջազգայինին բացուիլ: Ան իրաւունք չունի մէկը կամ միւսը անտեսելու կամ իրարու հակադրելու: Երկուքն ալ անհրաժեշտ են: Ծի՛շդ է, դժուար է երկուքը պահել միաժամանակ, նախընտրութիւն կատարելը թերեւս աւելի դիւրին է: Սակայն, նման մօտեցում հայ երիտասարդը պիտի հեռացնէ կամ ներկայ աշխարհէն եւ կամ հայ կեանքէն: Գիտակից հայ երիտասարդէն կը սպասուի իր կեանքին մէջ զիրար ամբողջացնող ներկայութիւն դարձնել ազգայինը ու միջազգայինը: Հայ երիտասարդի կեանքէն ներս այս երկու տարածքներուն ներդաշնակ ներկայութիւնը նաեւ պիտի հարստացնէ մեր հաւաքական կեանքը:

Երրորդ, հայ երիտասարդը սփիւռքի մէջ հայ մնալը պէտք է նկատուի ամէնօրեայ պայքար: Հայկական ճեղասպանութենէն յետոյ Սփիւռքի դժուար պայմաններուն մէջ հայը որոշեց հա՛յ մնալ ի գին ամէն զոհողութեան: Մեզ հայութենէն հեռացնող ազդակները այսօր բազմազան են ու այլազան. եւ հայ երիտասարդը մնայուն կերպով ենթակայ է նման պայմաններու անմիջական ազդեցութեան: Արդարեւ, օտար դպրոցներու ջամբած դաստիարակութիւնը, խառն ամուսնութիւնները, տնտեսական պատճառներով օտար շրջանակներու մէջ ապրիլը, եւ այլ գործնական պատճառներ - որոնք դժբախտաբար լայն ծաւալ ստացած են վերջին տասնամեակին - յաճախ, կամայ թէ՛ ակամայ, հայ երիտասարդը հեռու կը պահեն հայկական միջավայրէն: Հո՛ս է որ հայ երիտասարդը կոչուած է իր արմատներուն ամբողջ կառչելու: Հայութիւնը ո՛չ սոսկ ժառանգական կապ է, ոչ զգացական վիճակ. այլ էապէս՝ կապուածութիւն մեր արժէքներուն, աւանդութիւններուն ու իտէլաներուն, հաւատարմութիւն մեր ինքնութեան ու մասնակցութիւն մեր հաւաքական կեանքին: Ի՞նչ պայմաններու մէջ ալ գտնուի հայ երիտասարդը, ան պէտք է իր հայութիւնը ապրի ա՛յս գիտակցութեամբ ու յանձնառութեամբ:

* * *

Հայ երիտասարդը իր դժուարութիւնները, մտահոգութիւնները ու նաեւ տեսակէտները ունի ընդհանրապէս

ներկայ ընկերությունը ու մասնաւորաբար մեր ազգային-եկեղեցական կեանքը յուզող երեւոյթներուն ու խնդիրներուն նկատմամբ: Այլ խօսքով, անտարբեր ու կրաւորական չէ հայ երիտասարդը. ան ըսելիքներ ունի ու նաեւ սպասումներ մեզմէ:—

ա.- Հայ երիտասարդութիւնը ամէն բանէ առաջ կը սպասէ որ լուրջ մօտեցում ունենանք իր ներկայութիւնը մեր ընտանիքէն, կառույցներէն ու համայնական կեանքէն ներս: Փաստօրէն երէց սերունդը յաճախ կ'անտեսէ երիտասարդութեան ներկայութիւնը ու մասնաւորաբար դերակատարութիւնը, զայն նկատելով ոչ այնքան կենսական: Յաճախ մեր անտարբերութիւնը երիտասարդութեան մօտ կը ստեղծէ ընդվզում. մեր քննադատութիւնը երիտասարդութեան ուղղուած, իր մօտ կը յառաջացնէ ըմբոստութիւն կամ նոյնիսկ՝ հեռացում հայ կեանքէն: Անհրաժեշտ է որ մեր վերաբերումը փոխուի երիտասարդութեան նկատմամբ: Պէտք է գնահատենք երիտասարդութեան դերը ու քաջալիքենք անոր բերած իւրաքանչիւր նպաստը մեր կեանքի գանազան մարզերէն ներս:

բ.- Երիտասարդութիւնը կը սպասէ որ մասնակցողի՝ դերին մէջ ըլլայ եւ ոչ հետեւողի: Հարկ է երիտասարդութիւնը համոզել փաստացի տուեալներով, թէ ինք մեր կեանքի լուսանցքին չի պատկանիր, այլ մայր էջին. ո՛չ սոսկ ապագային՝ այլ նաեւ ներկային: Հարկ է երիտասարդութիւնը համոզել, գործնական նախաձեռնութիւններով, թէ ինք դիտողի կրաւորական վիճակին մէջ չէ, այլ գերակատարի ու նոյնիսկ առաջնորդողի: Այլ խօսքով, երիտասարդութիւնը պէտք է գիտնայ թէ սերտօրէն շաղախուած է մեր համայնական կեանքի բոլոր երեսներուն հետ: Այս գիտակցութեամբ ան պէտք է մօտենայ հայ կեանքին:

գ.- Երիտասարդութիւնը նաեւ կը սպասէ որ մեծերը միայն չքեղադրեն կամ չհրահանգեն, այլ խօսին իր հետ, լսե՛ն զինք: Հայ երիտասարդը ըսելիք ունի, մենք պէտք է պատրաստ ըլլանք լսելու զինք: Հետեւաբար, անկեղծ ու իրապաշտ երկխօսութիւն մը պէտք է տեղի ունենայ երէց սերունդին ու երիտասարդութեան միջեւ: Երիտասարդութեան հետ մեր յարաբերութիւնը ու գործակցութիւնը պէտք է հիմնուած ըլլան երկխօսութեան վրայ: Արդարեւ, երկխօսութեամբ միայն կարելի է յառաջացնել փոխադարձ վստահութիւն, ինչպէս նաեւ շինիչ ու օգտաշատ գործակցութիւն:

* * *

Ինչպէս երիտասարդութիւնը սպասումներ ունի երէց սերունդէն, նոյնպէս երէց սերունդը սպասումներ ունի երիտասարդութենէն, ըսելիքներ ունի երիտասարդութեան: Առաքելը կը յորդորէ երիտասարդները ըսելով՝ «Նոյնպէս ալ դուք, երիտասարդներ, հնազանդ եղէք ձեր բնութեան... Արքունի եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ սատանան առիւծի պէս մոնջելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ» (Ա. Պետրոս 5, 5-8): Այս օրերուն որքա՛ն սատանաներ, յաճախ գառնուկի մորթով, հոգեւոր պաճուճանքով ու հաճելի խօսքերով կը շրջին մեր երիտասարդներուն շուրջ ամէ՛ն տեղ ու ամէ՛ն վայրկեան...: Հայ երիտասարդը պէտք է գիտնայ իր կեանքի յստակ ճամբան, որ կը յատկանշուի հետեւեալ հիմնական սկզբունքներով:—

ա.- Հաւատարմութիւն: Հայ երիտասարդութեան հաւատարմութիւնը իր արմատներուն էական է իր ինքնութեան առողջ պահպանման համար: Որքան ալ ներկայ համաշխարհայնացած աշխարհը փորձէ հայ երիտասարդին ինքնութիւնը ապականել, ան իր կեանքի բոլոր պայմաններուն մէջ միշտ կառչած պէտք է մնայ իր իւրաքանչիւր ինքնութիւնը կազմաւորող արժէքներուն ու ավանդութիւններուն, հոգեւոր ու բարոյական ըմբռնումներուն ու համոզումներուն: Այսօրուան երիտասարդութիւնն է որ իր ամուր հաւատարմութեամբ պիտի երաշխաւորէ հայ ժողովուրդի պայծառ ապագան:

բ.- Մասնակցութիւն: Հաւատարմութիւն մեր ինքնութեան, կ'ենթադրէ մասնակցութիւն մեր կեանքին: Արդարեւ, ուր կազմակերպուած հաւաքական կեանք գոյութիւն ունի, հայ երիտասարդը իրաւունք չունի հեռու մնալու անկէ: Ուր համախումբ կեանք չկայ, իր արմատներուն հաւատարիմ հայ երիտասարդը այլ միջոցներ պէտք է որոնէ հաղորդ դառնալու մեր ազգային կեանքի տաղանայնորէն ու պայքարին: Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ որքա՛ն կարիքը ունինք հայ երիտասարդութեան գործօն ու գիտակից մասնակցութեան, անոր ներուժին:

գ.- Վերանորոգում: Մեր կեանքէն ներս գործող բոլոր կառույցները, ներառեալ եկեղեցին, անյետաճրգելի կարիքը ունին վերակենսունակացման ու վերանորոգման: Կարելի չէ անցեալէն ժառանգուած մտայնութեամբ գործել: Կարելի չէ թանգարանի վերածել մեր կառույցները: Ներկայ ընկերութեան պահանջներուն հետ քայլ պահելը անհրաժեշտութիւն է, բնականաբար առանց հեռանալու մեր հիմնական արժէքներէն, մեր ինքնութենէն: Հինը անտեսելը ճիշդ չէ. սակայն, հինը վերանորոգելը հրամայական է: Հո՛ս կը կայանայ ներկայ աշխարհի պայմաններուն ծանօթ ու տաղանայնորէն հաղորդ երիտասարդութեան եզակի նպաստը:

դ.- Տեսիլք: Ազգեր ու կրօններ, կառույցներ ու պետութիւններ կը ծաղկին ու կը յառաջդիմեն նպատակասլաց ծրագիրներով ու յառաջատեսիլ գործունէութեամբ: Արդ, անհրաժեշտ է ունենալ ապագային բացուող ու մեզ ապագային տանող տեսիլք: Անհրաժեշտ է որդեգրել նոր մտածելակերպ ու գործելակերպ՝ եթէ կ'ուզենք աւելի կազմակերպ ու կենսունակ դարձնել մեր ազգը ու մեր եկեղեցին: Նորարարութիւնը կը դառնայ ձեւական, երբ ան չէ զսպանակուած նոր տեսիլքով: Ուրիշը կապկելը կը դառնայ վնասաբեր, երբ մե՛րը կորսնցնենք: Ազգ-Ընդհանուր ժողովին խօսք առնող երիտասարդ մը ըսաւ.— «Այն հաւաքականութեան մէջ, ուր չկայ անցեալի փորձառութիւն, ներկայի բարեկարգութիւն ու ապագայի կանխատեսութիւն, այնտեղ նախաձեռն ու պարտութիւնը անխուսափելի են»: Կեանքը դիտելու իր նոր մօտեցումներով, հարցերը քննելու ու արժեւորելու իր նոր մեթոտներով, երիտասարդութիւնը կոչուած է նոր աւելի ներարկելու մեր կեանքին:

* * *

Մեր արժարժած խնդիրներուն ու պարզած սպասումներուն գծով հայ եկեղեցին կարեւոր ընելիք ունի: Յաճախ եկեղեցին կ'ըսէ՝ ո՛ւր է մեր երիտասարդութիւնը. նոյնպէս երիտասարդութիւնը

կըսէ՝ ո՞ւր է մեր եկեղեցին: Զիրար քննադատելու փոխարէն անհրաժեշտ է որ եկեղեցին եւ երիտասարդութիւնը զիրար փնտռեն, իրարու մօտենան, իրարու հետ խօսին: Փոխանակ միայն թեւադրութիւններ կատարելու, անհրաժեշտ է որ անոնք զիրար լսեն: Եւ աւելի՛ն, փոխանակ միայն իրարու հետ խօսելու անհրաժեշտ է որ միասին գործեն: Մեր կեանքին մէջ յաճախ վէրքի մասին կը խօսինք, բայց դարձանի մասին չենք մտածեր. յաճախ զիրար կ'այպանենք, սակայն մեր թերութիւնը ընդունելու ու զայն սրբադրելու քաջութիւնը չենք ունենար:

Ազգ. Ընդհանուր Ժողովին այլ երիտասարդ մը ըսաւ. «Մեր եկեղեցիէն կը սպասեմք այսօրուան կեանքի մտահոգութիւններուն ու պայմաններուն համապատասխանող ծրագիրներ»: Կը բաժնենք մեր երիտասարդութեան այս արդար սպասումը: Այո՛, մեր եկեղեցին կարիքը ունի վերանորոգման: Սակայն չի բաւեր միայն այս մասին խօսիլ, քննադատել, եւ հեռու մնալ մեր եկեղեցիէն: Հայ երիտասարդը պէտք է մասնակցի իր դարաւոր եկեղեցին վերանորոգելու հրամայական աշխատանքին: Գիտակից ու յանձնառու երիտասարդութեամբ միայն կարելի է վերանորոգել մեր եկեղեցին, եւ վերանորոգուած եկեղեցիով միայն կարելի է մեր հաւատքի առաքելութիւնը ազդու կերպով կենսագործել մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Հոգեւոր արժէքներու զարթնումը զգալի ներկայութիւն սկսած է դառնալ մեր երիտասարդներուն մօտ: Մեր եկեղեցին պէտք է անտեսէ այս դրական երեւոյթը: Ընդհակառակը գրաւիչ միջոցներով պէտք է գործնապէս մասնակից դարձնէ հայ երիտասարդը իր առաքելութեան, իր համայնական կեանքին: Երիտասարդը պէտք է դիտնայ թէ ինք Քրիստոսի արիւնով գնուած Աստուծոյ որդեգիր զաւակն է, եւ թէ՛ Աստուծոյ տունը իր հարազատ տունն է: Եւ եթէ եկեղեցիէն հեռացած երիտասարդներ կան, եկեղեցւոյ հովիւին դերը պէտք է ըլլայ, Աւետարանի՝ օրինակով, իննսունինը ոչխարները ձգել եւ մէկ ոչխարին հետէն երթալ (Մատթ. 18, 12):

Չմոռնանք Առաքեալին խօսքը՝ "Գրեցի ձեզի, երիտասարդներ, որովհետեւ Աստուծոմով զօրացաք" (Ա. Յովհ. 2, 14): Հայ երիտասարդը Աստուծոմով պէտք է զօրանայ. զԱստուած մեր ժողովուրդի կեանքին մէջ արեան վկայութեամբ կենդանի ներկայութիւն դարձուցած իր եկեղեցւոյ շունչով ու աղօթքով պէտք է աճի. իր ազգային արժէքներուն վահանով պէտք է դիմադրէ նոր ժամանակներու վտանգներուն՝ հեռու մնալով այնպիսի բարքերէ ու երեւոյթներէ, որոնք կը խաթարեն մեր հոգեւոր ու բարոյական արժէքները ու կ'աղարտեն մեր ազգային դիմագիծը:

Հայ երիտասարդութեան Տարին, հետեւաբար, պէտք է առիթ դառնայ մեր եկեղեցւոյ աւելի՛ խորացնելու հայ երիտասարդին նկատմամբ ունեցած իր յատուկ հոգածութիւնը: Ինչպէս նաեւ հայ երիտասարդին համար ան պէտք է դառնայ մարտահրաւէր՝ ամրապնդելու իր ազգային պատկանելիութիւնը եւ գործնականակցութիւն բերելու իր եկեղեցւոյ առաքելութեան, իր հայրենիքի ծաղկման ու իր ժողովուրդի յառաջդիմութեան:

* * *

Ահա այս մտածումներով ու սպասումներով, հայրական սիրով կոչ կ'ուղղենք մեր բոլոր թեմերուն,

միութիւններուն ու կառոյցներուն. –

ա. – Յատուկ ձեռնարկներու, ծրագիրներու ու աշխատանքներու ճամբով վերաշեշտելու հայ երիտասարդութեան առանցքային տեղը ու վճռական դերը մեր ժողովուրդի կեանքէն ներս:

բ. – Երիտասարդական շարժումներ յառաջացնելու՝ յատկապէս օտար շրջանակներուն մէջ մնացած հայ երիտասարդներուն ներարկելու մեր ազգային, հոգեւոր ու մշակութային արժէքները եւ զանոնք առաջնորդելու դէպի հայ կեանք:

գ. – Կազմակերպու հետեւողական աշխատանք տանելու՝ գործնապէս մասնակից դարձնելով երիտասարդութիւնը մեր թեմերու, կառոյցներու ու համայնքներու կեանքին ու գործունէութեան:

դ. – Դէպի մասնագիտութիւն ընթացող ներկայ ընկերութեան մէջ քաջալերելու բարձրագոյն ուսման հետեւող ուսանողները, եւ պատասխանատու պաշտօններ վստահելու զանազան բնագաւառներէն ներս մասնագիտութեան տիրացած մեր երիտասարդներուն:

Խորապէս կը հաւատանք որ երկխօսութեան ճամբով բաժնեկից դառնալով մեր երիտասարդութեան մտահոգութիւններուն, աջակից անոր ծրագիրներուն ու գործակից անոր նախաձեռնութիւններուն՝ պիտի կարենանք անոր ուժական ներդրումը ապահովել մեր կեանքին:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ իր երկնային շնորհքներով ծաղկազարդէ կեանքը մեր ազգի բոլոր երիտասարդներուն:

ՀԱՅՐԱԿԱ ՁԵՐԻ ԱՐՈՒ,

Աղօթար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
31 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2008
ԱՄԹՈՒԿԱ, ԼԻԲԱՆԱ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Հեղինակ՝
ՎԵՐՊ. ՄԱՆՈՒԷԼ ՃԻՆՊԱՇԵԱՆ

(Շարունակուած նախորդ թիւէն)

Յովհաննէսի աւետարանին 3.22-ին մէջ հետեւեալ տեղեկութիւնը գրուած է. «Այս հանդիպումէն ետք, Յիսուս իր աշակերտներով Հրէաստանի գաւառները գնաց, ուր անոնց հետ կը շրջէր եւ կը մկրտէր»: Հանդիպումը տեղի ունեցած էր Յիսուսի եւ փարիսեցի Նիկողեմոսի միջեւ: Նոյն աւետարանի 4.1-2-ը մեզի կը պարզէ սակայն, թէ Յիսուս ինք անձամբ չէր մկրտեր, այլ իր աշակերտներն էին մկրտողները:

Նոր Կտակարանեան շրջանի եկեղեցւոյ մէջ, մկրտութիւնը միակ եւ անհրաժեշտ միջոցն էր անդամ դառնալու եկեղեցիին, եւ այդ՝ Պենտէկոստէի օրէն սկսեալ: Առաքեալներուն

Գործերը գիրքին մէջ կը կարդանք. «Պետրոս պատասխանեց.- Ձեր ընթացքը փոխեցէք եւ իւրաքանչիւրդ մկրտուեցէք Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որպէսզի ձեր մեղքերը ներուիին: Եւ երբ մկրտուիք, խոստացուած պարգեւը՝ Ս. Հոգին պիտի ընդունիք (Գրծ 2.38):

Ուրեմն, մկրտուելով հաւատացեալը կ'օծուէր երկինքէն եւ ստանալով Ս. Հոգին՝ Քրիստոսի «մէկ մարմին»ին մաս կը կազմէր, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «մենք բոլորս՝ հրեայ թէ հեթանոս, ծառայ թէ ազատ, նոյն Հոգիով մկրտուեցանք՝ մէկ մարմին կազմելու համար, եւ ամէնքս ալ նոյն Հոգիէն խմեցինք» (Ա. Կր 12.13):

Առաքեալներուն Գործերը գիրքին մէջ միայն մէկ պարագայ արձանագրուած է, ուր մկրտութիւնը Ս. Հոգիին տրուելէն յետոյ կատարուած է: Ան ալ Կորնելիոսի ընտանիքին մկրտութիւնն է: Պետրոս առաքեալ Կորնելիոսի ընտանիքին համար ըսած է. «Ո՞վ կրնայ արգիլել, որ ջուրով մկրտուին ասոնք, որոնք Ս. Հոգին ստացան մեզի նման: Հրամայեց անոնց որ Յիսուս Քրիստոսի անունով մկրտուին» (Գրծ 11.47-48):

Մկրտութիւնը ամէն տեղ կը գործադրուէր, եւ ատիկա կրնանք տեսնել Պօղոս առաքեալի Հռոմայեցիներուն գրած նամակէն: Թէեւ առաքեալը չէր հիմնած Հռոմի եկեղեցին, եւ ոչ ալ մինչ այդ այցելած էր Հռոմ, սակայն գրած է. «Ձէ՞ք գիտեր, թէ մենք որ Յիսուս Քրիստոսի միանալով մկրտուեցանք՝ մկրտութեամբ անոր մահուան հաղորդակից դարձանք: Այսինքն՝ մկրտութեամբ անոր հետ միասին թաղուեցանք եւ մահուան հաղորդակից եղանք, որպէսզի ինչպէս Քրիստոս Հօր փառքով յարուցուին առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մենք նոր կեանքով ապրինք» (Հռ 6.3): Ասիկա կը նշանակէ, թէ առաքեալը ենթադրած է, որ Հռոմի մէջ եղող իւրաքանչիւր քրիստոնեայ մկրտուած ըլլալու էր:

Վաղագոյն շրջանի կամ առաջին եկեղեցւոյ մէջ մկրտութիւնը Տէր Յիսուսի կամ Տէր Յիսուս Քրիստոսի կամ Յիսուս Քրիստոսի անունով կը կատարուէր՝ (տե՛ս նախապէս մէջբերուած հատուածները, նաեւ՝ Գրծ 2.38, 8.16, 10.48, 19.5):

Մկրտուելէ առաջ թեկնածուն պարտաւոր էր հանրային խոստովանութիւն ընել եւ

իր հաւատքը եկեղեցւոյ առջեւ յայտարարել: Թէ ինչն՞: Առաքեալը կ'ըսէ. «Որովհետեւ եթէ բերանովդ խոստովանիս, թէ Յիսուս Տէր է, եւ սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց՝ կը փրկուիս» (Հռ 10.9: Տե՛ս նաեւ Ա. Կր 12.3: Փլպ 2.11: Ա. Տմ 6.12):

Պօղոս առաքեալի համար մկրտութեան ամբողջ իմաստը եւ արժէքը կը կայանայ Քրիստոսի հետ մեռնելով՝ յարութիւն առնելուն մէջ, ինչպէս նախապէս Հռոմայեցիներու նամակին 6.3-ը ցոյց կու տայ: Առաքեալը ուրիշ գեղեցիկ պատկեր մըն ալ կը գործածէ Գաղատացիներու նամակի 3.27-ին մէջ, երբ կ'ըսէ. «Անգամ մը որ Քրիստոսի միանալով մկրտուեցաք, այլեւս Քրիստոս է, որ կ'ապրի ձեր մէջ»:

Առաքեալը Գաղատացիներուն գրած նամակին մէջ կ'ըսէ նաեւ. «Քրիստոսի հետ խաչը ելայ եւ ալ կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս: Բայց ես որ հիմա մարմնովս կ'ապրիմ՝ Աստուծոյ Որդիին հաւատքովը կ'ապրիմ, որ զիս սիրեց ու իր անձը ինծի համար մատնեց» (Գղ 2.20):

Եթէ մենք Քրիստոսի հետ խաչը ելած ենք մկրտութեամբ, ո՞ւր են Քրիստոսի վէրքին նշանները մեր մարմնին վրայ...

Արդ, եկեղեցւոյ մէջ միայն մէկ մկրտութիւն կրնայ ըլլալ: Ծիշդ ինչպէս եկեղեցին մէկ Տէր ունի, մէկ հաւատք, մէկ Հայր, մէկ Ս. Հոգի եւ մէկ մարմին, նոյնպէս ալ մկրտութիւնը մէկ է: Պօղոս առաքեալ Եփեսացիներու նամակին մէջ կ'ըսէ. «Մէկ է մարմինը եւ մէկ՝ Ս. Հոգին, ինչպէս մէկ է յոյսը, որուն հրաւիրեց ձեզ Աստուած: Մէկ է Տէրը, մէկ՝ հաւատքը, եւ մէկ է մկրտութիւնը: Մէկ է Աստուած, Հայրն ամենուն, որ կը տիրէ բոլորին, կը գործէ բոլորին ընդմէջէն, եւ կը մնայ բոլորին մէջ» (Եփ 4.4-6):

Մկրտուելէ առաջ թեկնածուն պարտաւոր էր հանրային խոստովանութիւն ընել եւ իր հաւատքը եկեղեցւոյ առջեւ յայտարարել:

«Քրիստոսի հետ խաչը ելայ եւ ալ կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս»:

**Յաջորդ շաբաթույժ
Ժամանակացույց**

Յինգշաբթի, 22 Յունուար 2009

11.00 > Աղօթածողով՝

Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Կիրակի, 25 Յունուար 2009

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
թիւին,
կամ՝ 514 909 5203 թիւին:

ՀԻՄՆԱԴԱՆԵՐՈՒ ԱԺՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.
514 331 5445 x203 կամ 514 909 5203 թիւին:

Սոյն թերթիւն ե-նամակով ստանալու
չաւար Ձեր ե-Հասօն ուղղարկե՛ժէք
eglise58@sourphagop.com-ին

Հոգեւանգստեան Ձեր
արձանագրութիւնները նախօրօք
ԿԱՏԱՐԵՅԷ ԿԱՊՈՒԷԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՅՍ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Հասայաբն ժառանգութեան շաբաթ
ԵԿԵՂԵՅՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
ԲՅՅ Է

ԵՐԿՈՒԵԱԲԹԻՒՆ ՈՒՐԲԱԾ
ԺԱՐՆ 8.30-ԷՆ 16.00

Հանձնէք կապուիլ բարսոյրարին՝
514 331 5445 x202
կամ Հոգիին՝
514 331 5445 x203
կամ գրել շեքեիւն ե-Հասօնին՝
eglise58@sourphagop.com



ԱրՏԱՅՍՏՈՒԵՅԷ
eglise58@sourphagop.com

Նախորդ թիւերը կրնաք գտնել
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԷԶԻՆ ԿՐԱՅ